

Հ Ա Ն Ք

ԵՒ ԻՐԵՆՑ ՍՏՈՒԳԱՐԱՆՈՒԹԻՒՆՆ

(Շար. տես էջ. 563, 1898)

Արեւակն

ԱՆԱԲԱՆԱԳԱՆ Նորակազմ ամենէն ընտիր բառերէն մին՝ Արեւակն բառն է, որ Նորայրի բառարանի մէջ սեփականուած է զգ. Opale [լատ. Upalus, Սանսկրիտ Ուփալա = քար պատուական] բառին: Առանց տաւ տամետիւն կ'ընդունինք Նորայրի այս ընտիր բառը, և կը սեփականենք նոյնը սանսկրիտ Ուփալա բառին, որուն վերջերս բանասէր մը իբր հոմանիշ գործածած է Ուպալ, որ է զգ. Opale բառի տառադարձութիւն: Երկու հեղինակաւոր բառարաններու, Քալուստոյ և Նորայրի, մէջ յիշեալ բառին ուրիշ հոմանիշ մ'եւս սեփականուած է, այսինքն՝ նախնեաց Բազմագումի ակն բառը, որոյ կիրառութիւնը մի քանի գրեանք մէջ բաւական անճշգուծեամբ կը տեսնենք, և գրեթէ այս անճշգուծիւնը դեռ աւելի կատարելագործելու համար, ուրիշ բանասէր մը նոյն կնճառը բառը կը սեփականէ բոլորովին օտար բառի, Phyloromorphite.

Բազմագումի ակն բառը, ի Ս. Գիրս՝ միայն Նեղիկիէլի մարգարէութեանց մէջ գործածուած է երեք տեղ. գլ. Ա. 4. և 27. — գլ. Ը. 2: Բազմագումի ական երբայական բառն է ԼՊՄՈՂ = խաշմայ: Շրէտեր կ'ըսէ՝ թէ այս բառը միայն Նեղիկիէլի մարգարէութեանց մէջ գործածուած ըլլալով, կարելի է Մարգարէն ինքն չինած ըլլայ նոյն բառը:

Սոյն բառին նշանակութիւնը բաւական հակաճառութեանց նիւթ եղած է: Չայն Եօթնասուրցի յիլեքտրոն [իլեքտրոն] Թարգմանած են, Վուլկաթա electrum, իսկ մերը՝ Բազմագումի ակն, ինչպէս կը տեսնենք հետեւեալ Նեղիկիէլի խօսքերուն մէջ.

Իրոն զգոյն քազմագումի ական. Նեղ. Ը. 2. ὡς ὅρασις ἡλέκτρον = իլեքտրոն. Հմմտ. N. Jager. Հին Ասակ.:

Ut vivis electri. Վուլկաթա.
L'aspect de l'ambre [Սաթ?] (Հմմտ. La Sainte Bible, par M. l'abbé Trochon, էջ 67):

Տը Ժընուտ՝ Աստուածաշունչի գաղիներէն Թարգմանութեան մէջ այս բառը երեք տեղ ալ՝ փոխանակ Վուլկաթայի և Եօթնասուրց գործածած յիլեքտրոն (ambre) բառին, կը Թարգմանէ, Նեղ. Ա. 4 «*œil étincelant*», 27 «*feu étincelant*». Ը. 2 «*métal brillant*» (Հմմտ. Sainte Bible, traduction nouvelle par De Genoude). Այս Թարգմանիչը երբ. ԼՊՄՈՂ

բառին՝ քան զայս աւելի որոշ գաղափար ունեցած կ'երեւի:

Արդ մեզ կը մնայ ցուցնել հետեւեալ տողերով՝ թէ Նախնիք՝ Բազմագումի ակն չեն սեփականած լա. Upalusին. — և թէ՛ նոյն բառը կարելի չէ Սար Համարիլ: Մեր նախնիք Բազմագումի ակն բառով կ'անուանեն զանազան գեղեցիկ գոյներով պատուական ակունք. «*Լայնաբար երեւի նշանակել զբազմագունեան գոհարս*» (Հմմտ. Հայկ. բառ). և ուրովհետեւ Upalus կամ Opale այնպիսի հանք մ'է՛ որոյ վրայ կը ցոյան ծիածանի գեղանի և քազմաթիւ գոյներ, ուստի Բազմագումի ակն բառը կրնայ ասոր սեփականուիլ, թէեւ նախնիք նոյն բառը յն. յիլեքտրոն. երբ ԼՊՄՈՂ բառին սեփականած են, և ոչ Upalusին, որ մեր նախնեաց անծանօթ բառ մ'էր:

— Հանաքանութեան մէջ զանազան Opaleներ ըլլալով՝ Ներպպիք իւրաքանչիւրին առանձին անուններ սեփականած են. ուստի և հայերէնի մէջ՝ պէտք է այլեւայլ անուններով այդ իւրաքանչիւր հանքերը իբրամը որոշել: Ինչպէս Ներպպիք, նոյնպէս և մեզ լայնաբար Արեւակն կրնանք կոչել բոլոր Opaleները. իսկ ասոր զանազան տեսակները հետեւեալ կերպով կ'անուանակոչենք:

Ա. OPALE NOBLE կամ O. IRISÉE Բազմագումի ակն. — Այս հակաճառեալ բառը՝ միայն Արեւակի այս տեսակին կրնանք սեփականել. վասն զի Արեւակներու մէջ միայն սա է՝ որ կապոյտ, կանաչ, կարմիր և դեղին քազմաթիւ գոյներով [Բազմագումի] կը շողայ. նմանապէս առանց վարանելու՝ ասոր իբր հոմանիշ կրնանք ընդունիլ 2. Մէնէփիշանի Շիւածամիլ, և մեր Ազիլի արեւակ բառերը, աւելորդ համարելով Ազիլիս ոպալ հոմանիշը, որ բանասիրի մը՝ կէս Թարգմանեալ, կէս տառադարձեալ նորահնար բառն է:

Բ. OPALE DE FEU կամ O. À FLAMMES իմ հրաբխակ սեփականեցինք, առանց Pyropeին զիմացէն յափառակելու: Հրակն և յարմարցնելու այս հանքին, ինչպէս բանասէր մը ըրած է, բայց զիբաժն, զոր՝ հրակն բառի ստուգարանութեան մէջ պիտի ցուցնենք:

Գ. HYALITE Ալակներար [ἡαλός ալակի,

λόςος քար) . 2. Մենէփիշեան՝ Նորայրի կազմած և Brillantի զեղեցիկ աղանակը, տե՛. պրոյսանի) սեփականած նորակն բառը՝ տեղէն կը խախտէ և Hyaliteի կու տայ, իսկ Ապակե- քար բառը կը սեփականէ Սրկաքարի տեսակ- ներէն մոյն, Hydrate de fer concrécioné. Այս երկու բառերուն տեղափոխուիլ խիստ անհրճ կ'երեւի, և բոլորովին սխալ է Hyaliteի Ապակեքար չանփականելը:

Դ. HYDROPHANE յն. բառ ծծօր ըռք, φαίνω երեւցցանելն, գոր 2. Քալիւնի կը թարգմանէ Ջրերեւակ, ուսկից լաւագոյն կը գտնենք Ջրայլմ սեփականեալ բառը:

Ե. OPALE COMMUNE Հասարակ արեւակմ, որ կը ստորաբաժանի ըստ գանազան գունոց. կաթնագոյնը կոչեցինք Յալմակմ, ըստ 2. Մենէփիշեանի Կասնպայ. և դիզին մոմա- գոյնը՝ Մոմակմ, ըստ նոյն բանասիրի՝ Մոմագոյն պալ. որոնց ընտրութիւնը գործածողաց ճաշակին կը թողուի:

Զ. RESINITE Ռետնաքար, [2. Քալուենոյ], Ե. JASPE-OPALE, կոչեցինք Յասպիաքար, իսկ 2. Մենէփիշեան կոչած է Յասպիա-պալ, երկար-պալ. աւելի ընդունելի չեն ըլլար արդեօք Շողորկաթ կամ Շողայալիս:

Ը. XYLOPALE [փայտ-արեւակ], կոչեցինք ֓այտարեւակ կամ Շողափայտ (ըստ Շողակաք բառի կազմութեան). իսկ 2. Մենէփիշ կը կոչէ Փայտոպալ:

Այս մեր յիշած Opaleի գանազան տեսակներու յատուկ բառերն նախնեաց գրոց մէջ ամենեւին յիշատակուած չգտանք: Ոմանք կը համարին թէ նախնիք Նիկիտոնն, Սար և Բագմագունի ակն՝ հոմանիշ բառեր համարած ըլլան. — երկու առաջինները՝ այո՛, բայց երրորդը՝ ոչ: Ըստ մեր կարծեաց, նախնիք՝ Եգեկիէլի վերոյիշեալ երեք պարբերութեանց մէջ յիլեքտրոն բառը՝ գոր թագմագունի ակն թարգմանած են, երկտոնն կամ սար իմաստով թարգմանած չեն. վասն զի, եթէ այնպէս ըլլար՝ գոնէ մի տեղ Եգեկիէլի մէջ յն. հոմանիշ և նոյնաձայն Նիկիտոնն բառը գործածած կ'ըլլային: Ի՞նչո՞ւ. Աստուածայ. հետեւեալ տողերն, «Իսկ քե՛ և պղնձոյ և ի լիքսոլոթիմ, և ակամբ թագմագոմից տեսակ ըստ, և այլն», մեզ համար որոշ փաստ են՝ որ նախնիք ուրիշ հանք համարած են Նիկիտոնն [որ գրուած է նաեւ եղեքտոնն, էլեքտոնն, իղիկտոնն, իղիքտոնն, ղեկտոնն, իղեքտոնն], և այլ թագմագունի ակն: Այսու հանդերձ, վարագոյրի ետեւ չենք ծածկեր Նարեկազոյ մի տողը, որ մեր կարծեաց ճշգրտեան փոքրիկ խաշնդոսան և աննպաստ կրնայ համարուի. վասն զի, նա՛ Մայի՛ Տառին մէջ կ'ըսէ. « Նաեւ այլապէս...


հայտած՝ յէրարիոն աննոյնց կազմած՝ գրո փոփոխումնդ ի բացառսն կանտան » . [Հմմտ. Դրիգոր Նարեկացոյ երկրորդ մատեան ճառից. էջ 44]. Հոս մեր մեղաժողան նարեկացի վարդապետը կ'ակնարկէ Եգեկիէլի տե- սիլքը, և փոխանակ յիլեքտրոն բառը թագմագունի ակն թագմանելու կը տառադարձէ էլեքտոնն. և եթէ Նարեկացին Եգեկիէլի ԽՐԾՈՒ [Խալմալ] բառը՝ էլեքտոնն թարգ-

մանելով կը հասկնայ սար հանքը, կը սխալի. — բայց այսպէս չենք կարծեր. և մեր կարծեաց թիկուն կ'ըլլայ 2. Գարբ. Աւետիքեանի՝ Նա- րեկացունց յիշեալ տողերուն մեկնութեան այս խօսքերը, թէ « Ելիվարիոն քառ յունա- կան, որ ի քանս Եգեկիէլի ասի՝ Բագմագունի ակմ, իմանի քահրիպար [կը սխալի] առա- ցեալն այլազգեղեն, բայց առանձօր յարմար են իմանի ոսկեպղինձն, որ և ձամ աւի, և է հրահանքի քաղարկոյն ի պղնձոյ, յանագէ և ոսկոյ » [Հմմտ. նոյն երկը. էջ 59]: Արեւմն Նարեկացին՝ երկտոնն ըսելով ի հասկնար սար, որ պղնձոյ, անագի և ոսկոյ բաղա- դրութեամբ առաջ եկած մարմին մը չէ, այլ տարբեր հանք մը: Եգեկիէլի այն հանքին ա- նունը՝ որպիսի որ Յոյնք և Լատինք եղեկտրիոնն (սար) թարգմանած են, բայց Ս. Փրոց Հմուտ մեկնիչները զայն չեն ընդունիր իբր ասթ հանքը, այլ տարբեր մետաղ մը: Մինքն կ'ը- սէ՝ թէ « Սաթը (Electrum, ambre, succin, karabé), որ ընդհանրապէս Պալթիկ ծովու եզերքը կը գտնուի... կը տարակուսինք՝ որ նախնի Եբրայեցուն ծածած ըլլար: Եգեկիէլի մէջ յիշուած սարը կամ եղեկտրիոնը, ըստ Հերոնիմոսի՝ ոսկիէն և արծաթէն աւելի ըն- տիր մետաղ մ'էր »: Հմմտ. Encyclopédie théologique par l'Abbé Migne. — Պօլար [Հմմտ. Bochart, de Animal. sacr. t. II, t.

IV, c. XVI] թագմագունի ակն երբ. ԽՐԾՈՒ բառը կը համարի՝ թէ նշանակէ ոսկեպղինձ orichalcum. — Վերոյիշեալ արքայն Թրո- յոն սոյն մեկնութիւնը կու տայ. « Ծօթա- նասիւց և Վալկազայի թարգմանութիւնը կը դնեն յիլեքտրոն, electrum, այսինքն, շղդը- դուն փայլով մետաղ, որ յուսկու և յարժեք- թոյ բաղկացած է »: Հմմտ. Ստորաբոն III. 146. Պլինիոս, Բնակ. Պատ. XXXIII, 4: Ուրեմն սաթը մետաղ չըլլալով՝ անկարելի է որ մենք թագմագունի ակնը, ըստ կարծած անոնց, համարենք սար, այլ առանձին հանք մը:

Ազգային բանասիրաց համար միայն՝ կը յիշեն նաեւ Հիւնքեարպէյնեոսանի (որոյ երկն արժանի դատուեցաւ մրցանակի [!]) գաղափա- րաբեալ հանքի մասին. սա կը գրէ. « Թէ որ

2299-52



Պրս. սատ (Հարիւր) բառը չէ, Պրս. սատեֆ = Թըք. սետեֆ բառն է; (մարգարտաբեր խնցի ժողային), և ինչպէս որ գիտենք, բազմազունի մ'է՝ ուրեմն ըստ այս ստուգարան ազգային բանասիրի՝ բազմազունի ակն հանքը ոչ մանց կարծած սաթն է, և ոչ ալ մեր յիշեալ հմուտ երուպացի Ս. Կրոջ մեկնչաց ապացուցած ոսկեմետակ մետաղն, այլ Պրս. սատեֆի հայ սեփական բառն:

Կը վերջացնենք սոյն բառի ստուգարանութիւնը, որոշակի յայտնելով մեր գաղափարը՝ թէ նշեկիչի մէջ յիշուած բազմազունի ակն բառը՝ չէ սար հանքն, այլ ընտիր մետաղ մը. և սոյն բառը առանց վրիպելու կրնանք սեփականել զդ. Opale noble բառին:

Արեւյասպիս

Նորայրի Յասպիս արիւտ բառը Հ. Մէնէփիշեան Արեւյասպիս յարմարցնելով սեփականած է զդ. Hélioïrope [յն. γήλιοϛ = իլիոս արեւ, τρέπω = դեփտ դառնամ] բառին: Զայս ըստ յն. բառի, Թարգմանութեամբ պէտք էր կոչել Արեւալէւի, բայց որովհետեւ սոյն անուամբ Ամերիկայի բնիկ թուփ մը կը կոչուի, անոր համար այդ յարմար չէ: Մենք Hélioïrope հանքին ոչ Նորայրի յասպիս անունը բառն և ոչ ալ Հ. Մէնէփիշեանի յարմարցուցած Արեւյասպիսը կրնանք սեփականել: Երկու բառերուն բարդութեանց մէջ յասպիսի մուգն աւելորդ կը տեսնենք. վասն զի հանքը յասպիսի տեսակ մը չէ՝ այլ ակատի. ուստի ճշդութեան համար կամ Հ. Գալուեւոյ Ակատ կարմրանիշ [այսպէս կոչած է, վասն զի հանքին վրայ կան կարմիր բծեր], սեփականած հին բառը գործածելու է, և կամ փոխանակ Արեւյասպիսի, Արեւալէւ կոչելու է, պահելով յն. բառին արեւ իմաստը, և վրան հանքին տեսակին ակատ բառը բարդելով:

Արիւնաքար

Վերջնադարեան նորակազմ բառերէն է, որուն հոմանիշ են Մատիտ, [իտ. Matita], Կարմրաքար, Արիւնքար, Եմատիտ [ալպաւէլոց] զդ. Hématite, իսկ իտ. Ematita կամ Matita և կամ Amatita, ամէն ալ են տառադարձութիւնք յն. ալպաւէլոց = Էմատիթիս [արիւնանման] բառին. աստի թէ մեր և թէ ուրիշ արեւելեան մի քանի ինքուով այս հանածոյն Արիւնաքար կը կոչուի:

Հ. ՍԻՄՈՆ ՅԵՐՏԵԱՆ

Շաքայարեղի

ԱՆԱՆԻԱ ԹԱՐԴՄԱՆԻՔՆ

ԵՒ ԻՒՐ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՑ ՄԵԿ ՆՄՈՑԵՆ

Ամեն բազմաթիւ և լուսազեղ աստղերէն մին է Անանիա, զորս հայկական գրոց գիւտի և գրականութեան սկիզբը դրած ժամանակ Սահակ և Մեղրիպ լուսաւորեցին և սփռեցին մեր աշխարհի հեռաւոր սահմաններուն վրայ, հոն կրկին բռնաջող Հեթանոսութեան մթաքքն և մոլորութիւնները փարատելու համար. և որոց մտաւոր և բարոյական լուսաւորութեան ներքեւ ելաւ կանգնեցաւ մեր ազգի և աշխարհի քրիստոսապան և երջանկաւոր Սսկեղաքն: Մարդկային մասց և քաղաքակրթութեան յեղափոփոխ օրէնքն ի նկատի առած՝ զարմանք չէ, որ ինչպէս ուրիշ յառաջադէմ ազգաց՝ այսպէս և մեր ոսկեղան՝ ուշ կամ շուտ է թուի կապար շլատիւն և խաւարքի. այլ մեծապէս զարմանալի և նոյնի քան ցաւալին այն է մեզ համար, թէ ինչպէս այն հարիւրաւոր և հազարաւոր լուսամտի թարգմանիչներէն և գրիչներէն շատերուն գործոց հետ՝ անուանք իսկ Թաղուեցան է վիշ մուսացութեան և խաւարի:

Սակայն ինչպէս ուսումնաստեն ուղևորն՝ գիտութիւն և գուտաեմբերքեան ջանքի ձեռնին, կը դեգերի անդուլ անդադար Նոյն Ստիւն և արիւնական տափաստաններու և լեւնաշղթայից վրայ, անչեւալ զարուց մնացորդն է լոյս բերելու և ազգաց պատմութիւնը լրացնելու յուսով, այսպէս և հայազգի հնարիւղին և քննադատին անկ է. որոնք մեր աշխարհին կամ գրական պատմութեան և սոնապատմութեան մէջ՝ ոսկեգարու վիշ գործիչներուն և գործոց մուգուած յիշատակները: Այսպիսի շաւղղք և հետազոտութեամբ միայն կարելի է շատ քան յայտնել և անյայտ մնացելոց կենսագրութիւնները կազմել: Յարգ տպագրուած մեր նախնեաց մատեններն՝ իրեն պարզ նշանադրեր պիտի ծառայեն մեզ այսուհետեւ, և ոչ թէ ուղիղներ: Իւ միթէ միշտէ ցայսօր այսպիսի ջանքը յայտնուած նորուսեակներ իսկ, որոնց կրօնաւոր գեռ տաանեակ տարիներ յառաջ կ'ողորայիք անմիջեմբ, Նորարտ խրախոյսներ և իմաններ չէն մեզ առ այս:

Գալով ուղղակի մեր այս գրութեան նիւթ եղող Սանիային՝ պէտք է ըսել, թէ նա իւր հասակակից, կամ կրտսեր թարգմանչաց շատն րէն աւելի բաղջաւոր է զարեւել. վասն զի անոնց հետ՝ կարծեք թէ անուանք իսկ մեռան ապագայից համար. իսկ սորա անուան զուգակից՝ գործերն ևս ըստ իմիջ անմահացած են Հայոց հին պատմութեան մէջ: Արգիք՝ ամենա